ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Ազատաշեն համայնք, 3-րդ փողոց թիվ 10/1
Հեռ. 094-81-99-77
email azatashen.hamaynk@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 13-Ն

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել Ազատաշեն համայնքի ավագանու կանոնակարգը

Ավագանու անդամներ

Անդրանիկ Ալոյան կողմ

Մենիկ Ավետիսյան կողմ

Եսայի Լոռեցյան կողմ

Հակոբ Սաֆարյան կողմ

Վաչագան Ստեփանյան կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Ազատաշեն համայնք, 3- րդ փողոց թիվ 10 / 1
Հեռ. 094-81-99-77
email azatashen.hamaynk@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 14 - Ն

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ _Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի 18 - րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ազատաշեն համայնքի 2013 թ – ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1.Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար

1 / մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ

2/ սույն կետի << ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201 – ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -15000 դրամ

բ/ 501 -ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000 դրամ

գ/1001 – ից և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -1500դրամ

4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառության Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

1/չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության - 1500դրամ

2/ բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա , բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանցված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով

3/ նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա , սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը :

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար , տեղական տուրքը սահմանվում է - 2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝

1 / ոգելից խմիչքների թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 5000 դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպում՝ յուրաքան - չյուր եռամսյակի համար - 5000 դրամ

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար -350 դրամ

2/ հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվութ- յան համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150 000 դրամ

3/ խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 40 000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները՝ ժամը 24. 00 - ից հետո աշխա - տելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1/ առևտրի օբյեկտների համար - 25 000 դրամ

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 50 000 դրամ

3/ բաղնիքների / սաունաների / համար - 200 000 դրամ

4/ խաղատների կազմակերպման համար - 500 000 դրամ

5/ շահումով խաղերի կազմակերպման համար - 250 000 դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1 500 դրամ

2/ թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2 500դրամ

3/ այլ արտաքին գովազդի համար - 1000 դրամ

4/ դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է – 3 000 դրամ

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10 000 դրամ

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 5 000 դրամ

11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել – 3 000 դրամ

12.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար սահմանել - 3 000 դրամ

13 .Սույն որոշման 1 – ին , 2 – րդ , 3 – րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0 ,5 գործակցով

Ավագանու անդամներ

Անդրանիկ Ալոյան

Սենիկ Ավետիսյան

Եսայի Լոռեցյան

Հակոբ Սաֆարյան

Վաչագան Ստեփանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ